

**ՇԱԹԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
«Արդարադատության ակադեմիայի դասընթացավար»

SHATIRYAN EDGAR

Candidate of Legal Sciences, Associate Professor,
Trainer of the Academy of Justice of Armenia

ШАТИРЯН ЭДГАР

кандидат юридических наук, доцент,
преподаватель Академии юстиции Армении

**ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿՎԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՈՒ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ***

**SOME ISSUES RELATED TO THE REVIEW OF ASSET AND INCOME DECLARATION
CONTENT AND IMPROVEMENT OF THE TOOLKIT OF DECLARATION ANALYSIS***

**НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПЕРЕСМОТРА СОДЕРЖАНИЯ ДЕКЛАРАЦИЙ ИМУЩЕСТВА И
ДОХОДОВ И РЕФОРМИРОВАНИЯ ИНСТРУМЕНТАРИЯ АНАЛИЗА ДЕКЛАРАЦИЙ***

«Հանրային ծառայության մասին» 26.05.2011 թվականի օրենքին և ՀՀ կառավարության 15.12.2011 թվականի N 1819-Ն որոշմանը համապատասխան՝ հիշյալ օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են իրենց պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց, ինչպես նաև գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց տարեկան հայտարարագրեր: Մինչդեռ, նշված օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք ներկայացնում են միայն գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրեր:

Հիշյալ հանգամանքով պայմանավորված՝ նույնական չէ հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց կողմից հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը/ցանկը: Մասնավորապես, հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց կողմից բացառապես տարեկան հայտարարագիր ներկայացնելու հանգամանքով պայմանավորված՝ նրանց հայտարարագրերի գույքին վերաբերող հատվածում ենթակա են լրացման տվյալներ միայն տվյալ տարում գույքի ձեռքբերման և (կամ) օտարման գործարքների վերաբերյալ, որպիսի հանգամանքով պայմանավորված՝ նրանց սեփականության իրավունքով պատկանող գույքի վերաբերյալ տվյալներն իրենց հայտարարագրերում ենթակա են լրացման այնքանով, որքանով դրանք վերաբերելի են տվյալ տարում գույքի ձեռքբերման և (կամ) օտարման գործարքներին¹: Հատկանշական է, որ հայտարարատու պաշ-

* Հոդվածը ներկայացվել է 15.08.2019, գրախոսվել է 27.08.2019, ընդունվել է տպագրության 13.12.2019:

* The article was presented 15.08.2019, was reviewed 27.08.2019, was accepted to publication 13.12.2019.

* Статья представлена 15.08.2019, рецензирована 27.08.2019, принята в печать 13.12.2019.

¹ Ընդ որում, հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց (բացառությամբ ամուսնու) կողմից հայտարարագրման ենթակա են տվյալ տարում անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 50 միլիոն դրամը, իսկ շարժական գույքի մասով՝ 8 միլիոն դրամը գերազանցող գործարքները:



տոնատար անձի ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց (բացառությամբ ամուսնու) հայտարարագրում առկա չէ դրամական միջոցների վերաբերյալ բաժին, այսինքն՝ նրանք իրենց դրամական միջոցների վերաբերյալ տվյալները չեն հայտարարագրում:

Վերոնշյալ խնդիրներին մասամբ լուծումներ են տրված «Հանրային ծառայության մասին» 23.03.2018թ. ՀՀ օրենքով, որի՝ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրմանը վերաբերող դրույթների մեծ մասն ուժի մեջ կմտնեն 2020 թվականի հունվարի 1-ից: Մասնավորապես, այդ օրենքով գույքի հայտարարագրման առնչությամբ վերացվել են վերը հիշատակված գումարային (արժեքային) շեմերը, դրամական միջոցների վերաբերյալ տվյալներ հայտարարագրելու պահանջ է սահմանվել հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի բոլոր անդամների համար, որոնք իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ կլրացնեն նաև հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու և դրանք դադարեցնելու օրվա դրությամբ: Այլ խոսքերով՝ հայտարարագրերի բովանդակությունն, ըստ էության, միասնականացվելու է:

Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ «Հանրային ծառայության մասին» 26.05.2011 թվականի և 23.03.2018 թվականի օրենքներով ամրագրված՝ հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը/ցանկը խիստ նեղ է և, ըստ էության, հնարավորություն չի ընձեռում իրականացնելու հայտարարագրերի արդյունավետ վերլուծություն, մասնավորապես, ապօրինի հարստանալու ռիսկերի վերհանման առումով: Այդ առնչությամբ, նկատենք, որ թեև ՀՀ քրեական օրենսգրքի՝ ապօրինի հարստանալուն վերաբերող հոդվածն ուժի մեջ է մտել 01.07.2017 թվականից, որին համապատասխան՝ ապօրինի հարստանալը՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումն է, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով¹, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են, այդուհանդերձ, գույքի և եկամուտների հայտարարագրերի բովանդակությունն, ըստ էության, համահունչ չէ ապօրինի հարստանալու դիսպոզիցիային և չի փոփոխվել: Այդ առումով, թեև «Հանրային ծառայության մասին» 23.03.2018 թվականի ՀՀ օրենքով կատարվել են որոշակի վերանայումներ, այդուհանդերձ, գույքի և եկամուտների հայտարարագրերի բովանդակությունը կարիք ունի վերանայման:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 01.01.2020 թվականից ուժի մեջ են մտնելու «Հանրային ծառայության մասին» 23.03.2018 թվականի ՀՀ օրենքի (ստորև՝ Օրենք)² հայտարարագրերի (տվյալ դեպքում՝ գույքի և եկամուտների) պայմանականորեն նոր բովանդակությունը սահմանող օրինադրույթները՝ անդրադարձ կկատարվի միայն հիշյալ օրենքով սահմանված վերաբերելի օրինադրույթների վերանայման հարցին:

Օրենքին համապատասխան՝ հայտարարագրման ենթակա են հայտարարատու պաշտոնատար անձին և նրա ընտանիքի անդամներին (այսուհետ՝ հայտարարատու) միայն սեփականության իրավունքով պատկանող գույքի, իսկ շարժական գույքի մասով՝ միայն տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալները: Այդ առնչությամբ, նախ հարկ է նշել, որ եվրոպական մի շարք պետությունների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ գույքի առնչությամբ հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը/ցանկն ավելի լայն է:

¹ Միավորված ազգերի կազմակերպության 31.10.2003թ. «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (Հայաստանը Կոնվենցիան վավերացրել է 23.10.2006թ.) 20-րդ հոդվածին համապատասխան՝ ապօրինի հարստանալը պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումն է, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն հիմնավորել:



Մասնավորապես, *Մոլդովայում* հայտարարագրման ենթակա են այն անշարժ և շարժական գույքը, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտները¹, որոնք հայտարարատուին և նրա ընտանիքի անդամներին են պատկանում սեփականության, ուզուֆրուկտի, օգտագործման, բնակության, սուպերֆիցիայի իրավունքներով, կամ որոնք գտնվում են հայտարարատուի, նրա ընտանիքի անդամների կամ փաստացի ամուսնու տիրապետման ներքո՝ հանձնարարության, կոմիսիայի, հավատարմագրային կառավարման պայմանագրերի, տիրապետման և օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագրերի հիման վրա: Այդ երկրում հայտարարագրման ենթակա են նաև հայտարարատուի, նրա ընտանիքի անդամների, փաստացի ամուսնու կողմից հաշվետու ժամանակահատվածում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի հատուցելի կամ անհատուց հիմունքներով փոխանցված գույքը, եթե յուրաքանչյուր օբյեկտի գինը գերազանցում է օրենքով սահմանված շեմը, ինչպես նաև մտավոր սեփականության իրավունքից ծագող գույքային իրավունքները²:

Ալբանիայում հայտարարագրման ենթակա են անշարժ գույքը և քաղաքացիական օրենսգրքին համապատասխան՝ դրա նկատմամբ իրավունքները, հանրային ռեեստրներում գրանցման ենթակա շարժական գույքը և քաղաքացիական օրենսգրքին համապատասխան՝ դրա նկատմամբ իրավունքները³:

Ուկրաինայում հայտարարագրման ենթակա է հայտարարատուին և նրա ընտանիքի անդամներին ոչ միայն սեփականության իրավունքով պատկանող, այլև նրանց կողմից վարձակալված կամ այլ իրավունքով օգտագործվող անշարժ գույքը՝ անկախ գործարքի կնքման ձևից, ինչի արդյունքում ձեռք է բերվել այդ իրավունքը: Հայտարարագրման ենթակա են նաև չհաճագործվող օբյեկտները, այն օբյեկտները, որոնց նկատմամբ սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով գրանցված չէ, ինչպես նաև հայտարարատուին կամ նրա ընտանիքի անդամներին պատկանող ոչ նյութական ակտիվները, այդ թվում՝ մտավոր սեփականության օբյեկտները, որոնք կարող են գնահատվել դրամական արտահայտությամբ⁴:

Բուլղարիայում հայտարարագրման ենթակա է նաև այլ անձի՝ որոշակի գումարային շեմը գերազանցող անշարժ և շարժական գույքը, որը պարբերաբար օգտագործվում է հայտարարատուի կամ նրա ամուսնու (փաստացի ամուսնու) կողմից⁵:

Թանկարժեք գույքը հայտարարագրելու առնչությամբ Օրենքով սահմանված է ութ միլիոն դրամ գումարային (արժեքային) շեմ: Այդ առնչությամբ, նախ, հարկ է նշել, որ վերոնշյալ շեմը բարձր է, սակայն անգամ դրա նվազեցումը սկզբունքորեն չի լուծի համապատասխան գույքի՝ որպես թանկարժեք գույք, հայտարարագրման ենթակա լինելու կամ հայտարարագրված թանկարժեք գույքի վերաբերյալ տվյալների՝ ամբողջական, արժանահավատ լինելու հարցերը, քանզի, մի կողմից, թանկարժեք գույքի գնահատման առնչությամբ հայտարարատուի հայեցողությունն, ըստ էության, չափազանց լայն է, մյուս կողմից, Կոռուպցիայի կանխարգելման հանձ-

¹ Անավարտ շինարարության օբյեկտները հայտարարագրման ենթակա են նաև Լիտվայում (LAW ON THE DECLARATION OF ASSETS OF RESIDENTS, 16 May 1996 – No I-1338, հոդ. 3), Ուկրաինայում (Закон Украины "О предотвращении коррупции" от 14 октября 2014 года №1700-VII, հոդ. 46):

² Տե՛ս Закон Республики Молдова "О декларировании имущества и личных интересов", №. 133 от 17.06.2016, հոդ. 4: Համանման դրույթներ են բովանդակվում «Հակակոռուպցիոն գործակալության մասին» Սերբիայի օրենքում, հոդ. 46 // <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/> (Վերջին մուտք՝ 09.08.2019):

³ Տե՛ս Law No. 9049 dated 10.04.2003 "ON THE DECLARATION AND AUDIT OF ASSETS, FINANCIAL OBLIGATIONS OF ELECTED PERSONS, AND CERTAIN PUBLIC OFFICIALS", հոդ. 4:

⁴ Տե՛ս Закон Украины "О предотвращении коррупции" от 14 октября 2014 года №1700-VII, հոդ. 46:

⁵ Տե՛ս ACT ON COUNTERACTING CORRUPTION AND ON SEIZURE OF ILLEGALLY ACQUIRED PROPERTY (Prom. SG. 7/19 Jan 2018, amend. and suppl. SG. 20/6 Mar 2018, suppl. SG. 21/9 Mar 2018), հոդ. 37:



նաժողովի կողմից համապատասխան գույքի՝ որպես թանկարժեք գույք, հայտարարագրման ենթակա լինելու հանգամանքը ստուգելու կամ հայտարարագրված թանկարժեք գույքի վերաբերյալ տվյալների ամբողջականությունն ու արժանահավատությունը ստուգելու գործիքակազմ Օրենքով նախատեսված չէ: Նշված խնդրին լուծում կարող է տրվել Օրենքով գույքի հայտարարագրի թանկարժեք գույքի վերաբերյալ բաժնի վերացմամբ և հայտարարագրի շարժական գույքի վերաբերյալ բաժնում ոչ միայն տրանսպորտային միջոցների, այլև այլ շարժական գույքի վերաբերյալ տվյալները հայտարարագրելու պահանջի ամրագրմամբ: Կամ, տրանսպորտային միջոցներից բացի, այլ շարժական գույքի հայտարարագրման ենթակա լինելու առնչությամբ Օրենքով կարող է սահմանվել որոշակի գումարային (արժեքային) շեմ:

Խնդրո առարկայի առնչությամբ, հարկ է նկատի ունենալ, որ արտասահմանյան որոշ պետություններում հայտարարագրման ենթակա են որոշակի գումարային շեմը գերազանցող շարժական գույքը/իրերը (օրինակ՝ *Սլովենիայում*¹, Ալբանիայում, *Սլովակիայում*²): Որոշ պետություններում թանկարժեք գույքի վրա առանձին շեշտադրում է կատարված՝ հայտարարագրման ենթակա են թանկարժեք մետաղներից և (կամ) թանկարժեք քարերից պատրաստված իրերի, արվեստի ստեղծագործությունների, ազգային կամ համաշխարհային մշակութային ժառանգության՝ որոշակի գումարային շեմը գերազանցող օբյեկտների, արվեստի ստեղծագործությունների կամ այլ օբյեկտների՝ որոշակի գումարային շեմը գերազանցող հավաքածուների (Մոլդովա), որոշակի գումարային շեմը գերազանցող թանկարժեք շարժական գույքի վերաբերյալ տվյալները (Ուկրաինա):

Օրենքով սահմանված չէ պարտավորությունների հայտարարագրման պահանջ, թեպետ, որոշ պարտավորությունների՝ վարկերի, ստացված փոխառությունների վերաբերյալ տվյալները ենթակա են հայտարարագրման եկամուտների հայտարարագրի շրջանակում, այսինքն՝ դրանք հայտարարագրման իմաստով դիտարկվում են որպես եկամուտներ: Վարկերի և ստացված փոխառությունների առնչությամբ հարկ է նշել, որ Օրենքով հայտարարագրման ենթակա չեն վարկերի մարումների, ստացված փոխառությունների վերադարձի վերաբերյալ տվյալները: Հիշյալ հանգամանքներով պայմանավորված՝ կարելի է արձանագրել, որ ապօրինի հարստանալու ռիսկերի (դեպքերի) վերհանման կտրվածքով հայտարարագրերի վերլուծության գործընթացում առկա են լրջագույն խնդիրներ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-ին հոդվածում ապօրինի հարստանալու ներքո հասկացվում է հայտարարատուի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) *պարտավորությունների նվազումը*, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով... Այդ առումով ևս, կարելի է արձանագրել, որ Օրենքով սահմանված հայտարարագրերի բովանդակությունը համահունչ չէ ապօրինի հարստանալու դիսպոզիցիային:

Նշված խնդրի համատեքստում համառոտ անդրադառնանք եվրոպական մի շարք պետություններում գործող վերաբերելի իրավակարգավորումներին: Այսպես, Ալբանիայում հայտարարագրման ենթակա են ֆիզիկական և իրավաբանական անձանց հանդեպ ստանձնած բոլոր պարտավորությունների, իսկ *Լատվիայում*³, Բուլղարիայում՝ որոշակի գումարային շեմը գերազանցող պարտավորությունների վերաբերյալ տվյալները: Վերջիններիս, երաշխավորու-

¹ St' u INTEGRITY AND PREVENTION OF CORRUPTION ACT, հոդ. 42 // <https://www.kpk-rs.si/kpk/wp-content/uploads/2018/06/ZintPK-ENG.pdf> (Վերջին մուտք՝ 09.08.2019):

² St' u The Constitutional Act 357/2004 Coll. on the Protection of Public Interest in the Performance of Offices by Public Officials, հոդ. 7 // [https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Working_Groups/workinggroup4/2018-September-6-7/Con tributions NV/Slovakia EN.pdf](https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Working_Groups/workinggroup4/2018-September-6-7/Con%20tributions%20NV/Slovakia_EN.pdf) (Վերջին մուտք՝ 09.08.2019):

³ St' u Law on Prevention of Conflict of Interest in Activities of Public Officials, հոդ. 24 // <https://likumi.lv/ta/en/en/id/61913-on-prevention-of-conflict-of-interest-in-activities-of-public-officials> (Վերջին մուտք՝ 09.08.2019):



թյունների վերաբերյալ տվյալները ենթակա են հայտարարագրման նաև Սլովենիայում: Մոլդովայում հայտարարագրման ենթակա են մի շարք պարտավորությունների, այդ թվում՝ դեբիտի, գրավի, երաշխավորության վերաբերյալ տվյալները: Ուկրաինայում հայտարարագրման ենթակա ֆինանսական պարտավորություններից են լիզինգի, ապահովագրական և ոչ պետական կենսաթոշակային ապահովության պայմանագրերի առնչությամբ պարտավորությունների, ինչպես նաև վարկի մարման, ստացված փոխառության վերադարձի (այդ առնչությամբ տոկոսների վճարման) վերաբերյալ տվյալները: *Չեխիայում* պարտավորությունների առնչությամբ հայտարարագրման ենթակա են նաև գույքի վարձակալության դիմաց վճարների վերաբերյալ տվյալները¹:

Օրենքով սահմանված չէ նաև մի շարք ծախսերի հայտարարագրման պահանջ, թեպետ, որոշ կապիտալ ծախսերի (օրինակ՝ անշարժ գույքի ձեռքբերման) վերաբերյալ տվյալները ենթակա են հայտարարագրման: Այդ առնչությամբ, օրինակ՝ Ալբանիայում, *Վրաստանում*² հայտարարագրման ենթակա են հաշվետու ժամանակահատվածում որոշակի գումարային շեմը գերազանցող ծախսերը: Բուլղարիայում հայտարարագրման ենթակա են թրեյնինգների, ճանապարհորդության, օրենքով սահմանված գումարային շեմը գերազանցող այլ ծախսերի ծածկմանն ուղղված հատկացումները, որոնք չեն վճարվում սեփական, հանրային կամ այն հաստատության միջոցներից, որտեղ անձը պաշտոն է զբաղեցնում: Ուկրաինայում հայտարարագրման ենթակա են հաշվետու ժամանակահատվածում կատարված ծախսերը և գործարքները, որոնց հիման վրա հայտարարատուի մոտ ծագում կամ դադարում են անշարժ և շարժական գույքի, ոչ նյութական և այլ ակտիվների նկատմամբ սեփականության, տիրապետման կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև ծագում են օրենքում նշված ֆինանսական պարտավորությունները: Այստեղ ևս ծախսերի՝ հայտարարագրման ենթակա լինելու առնչությամբ սահմանված է որոշակի գումարային շեմ:

Վերոնշյալի համատեքստում կարևորում ենք Հայաստանում մի շարք պարտավորությունների և ծախսերի հայտարարագրման համակարգի ներդնումը՝ այդ առնչությամբ սահմանելով որոշակի գումարային շեմ:

Օրենքով հայտարարագրման ենթակա են դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած)՝ նշելով դրամական միջոցի չափը և արժույթը: Այդ առնչությամբ, նախ, հարկ է նկատել, որ կանխիկ և անկանխիկ դրամական միջոցներն, ըստ էության, սահմանազատված չեն, որպիսի հանգամանքով պայմանավորված հայտարարատուի վրա դրված չէ պարտականություն կանխիկ և անկանխիկ դրամական միջոցների վերաբերյալ տվյալները լրացնել առանձին: Բացի դրանից, հարկ է նշել, որ Օրենքով դրամական միջոցների առնչությամբ սահմանված է միայն դրանց չափի և արժույթի վերաբերյալ տվյալներ հայտարարագրելու պահանջ, այսինքն՝ հայտարարատուի հաշիվներին առկա դրամական միջոցների մասով սահմանված չէ հաշվի տեսակի և այն սուբյեկտի վերաբերյալ տվյալներ հայտարարագրելու պահանջ, որտեղ բացվել/փակվել են այդ հաշիվները:

Հիշյալ խնդրի համատեքստում, նկատի ունենալով նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 09.06.2017 թվականի օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներն առ այն, որ հայտարարագրերի վերլուծության գործընթացում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրավասու չէ պահանջելու և ստանալու հայտարարատուներին առնչվող «Բան-

¹ St' u Act of Law No. 159/2006 Coll., of March, 16th 2006, on Conflict of Interests, հոդ. 11 // https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/law-library-files/Czech%20Republic_Conflict%20of_%20Interest_%20Act_159_2006_EN.pdf (Վերջին մուտք՝ 09.08.2019):

² St' u LAW OF GEORGIA ON CONFLICT OF INTEREST AND CORRUPTION IN PUBLIC INSTITUTIONS, No 4358 of 27 October 2015, հոդ. 15 // <http://csb.gov.ge/uploads/745748.pdf> (Վերջին մուտք՝ 09.08.2019):



կային գաղտնիքի մասին» օրենքով նախատեսված դեպքերում բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ և փաստաթղթեր, կարելի է փաստել, որ, մի կողմից, դրամական միջոցների առնչությամբ հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը/ցանկն է թերի (ոչ ամբողջական), մյուս կողմից՝ հայտարարագրման ենթակա կամ հայտարարագրված դրամական միջոցների վերաբերյալ տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգման գործիքակազմը:

Ի հավելումն, հարկ է նկատել, որ թերի է նաև Օրենքով հանձնված/վերադարձված փոխառությունների համատեքստում որպես բանկային ավանդ ներդրված միջոցների/դրանց շարժի, ինչպես նաև այդ առնչությամբ որպես եկամուտ ստացված տոկոսագումարների վերաբերյալ տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգման գործիքակազմը՝ պայմանավորված՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին հասանելիության բացակայության հանգամանքով:

Վերոնշյալի առնչությամբ, եվրոպական մի շարք պետություններում գործող վերաբերելի իրավակարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համապատասխան իրավական ակտերով ուղղակիորեն սահմանված է նաև անկանխիկ միջոցների/բանկային հաշիվների (դրանցում առկա դրամական միջոցների) վերաբերյալ տվյալների հայտարարագրման պահանջը¹, իսկ առանձին պետություններում հայտարարագրերն ընդունող մարմիններն ունեն հասանելիություն բանկային գաղտնիք կազմող տվյալների բազաներին (Ուկրաինա², Սլովենիա³, Բուլղարիա⁴, Սերբիա⁵ և այլն): Հարկ է նշել, որ առանձին պետություններում բանկային գաղտնիք կազմող տվյալների բազաներին/համապատասխան հաշիվների ռեեստրներին հասանելիությունը տրամադրվում է դատական ակտի հիման վրա:

Վերոնշյալի առնչությամբ, կարևորում ենք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ ոչ միայն համապատասխան տվյալների բազաներին/հաշիվների ռեեստրներին հասանելիությունը, այլև վերջինիս տրամադրման կառուցակարգերի ամրագրումը նաև օրենսդրական մակարդակում⁶: Հարկ է նկատի ունենալ, որ թեև ՀՀ իրավապահ մարմիններին, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելու/հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնե-

¹ Տե՛ս օրինակ՝ Սերբիա, «Հակակոռուպցիոն գործակալության մասին» օրենք, հոդ. 46 // <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>, Բուլղարիա, ACT ON COUNTERACTING CORRUPTION AND ON SEIZURE OF ILLEGALLY ACQUIRED PROPERTY (Prom. SG. 7/19 Jan 2018, amend. and suppl. SG. 20/6 Mar 2018, suppl. SG. 21/9 Mar 2018), հոդ. 37, Սլովենիա, INTEGRITY AND PREVENTION OF CORRUPTION ACT (<https://www.kpk-rs.si/kpk/wp-content/uploads/2018/06/ZintPK-ENG.pdf.pdf>), հոդ. 42, Լիտվա, LAW ON THE DECLARATION OF ASSETS OF RESIDENTS, 16 May 1996 – No I-1338, հոդ. 3, Լատվիա, Law on Prevention of Conflict of Interest in Activities of Public Officials, հոդ. 24 // <https://likumi.lv/ta/en/en/id/61913-on-prevention-of-conflict-of-interest-in-activities-of-public-officials>, Ալբանիա, Law No. 9049 dated 10.04.2003 "ON THE DECLARATION AND AUDIT OF ASSETS, FINANCIAL OBLIGATIONS OF ELECTED PERSONS, AND CERTAIN PUBLIC OFFICIALS", հոդ. 4 (Վերջին մուտք՝ 09.08.2019):

² Տե՛ս Закон Украины "О банках и банковской деятельности" от 07.12.2000 № 2121-III, հոդ. 62, կետ 8 // https://kodeksy.com.ua/ka/o_bankah_i_bankovskoj_deyatelnosti/statja-62.htm (Վերջին մուտք՝ 09.08.2019):

³ Տե՛ս INTEGRITY AND PREVENTION OF CORRUPTION ACT, հոդ. 16 // <https://www.kpk-rs.si/kpk/wp-content/uploads/2018/06/ZintPK-ENG.pdf.pdf> (Վերջին մուտք՝ 09.08.2019):

⁴ Տե՛ս ACT ON COUNTERACTING CORRUPTION AND ON SEIZURE OF ILLEGALLY ACQUIRED PROPERTY (Prom. SG. 7/19 Jan 2018, amend. and suppl. SG. 20/6 Mar 2018, suppl. SG. 21/9 Mar 2018), հոդ. 44:

⁵ Տե՛ս <https://cms.law/en/SRB/Publication/Serbian-Parliament-adopts-new-Anti-Corruption-Law> (Վերջին մուտք՝ 09.08.19):

⁶ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀՀԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների գնահատման ծրագրի 3-րդ փուլի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցում առաջարկել է վերանայել և ուսումնասիրել հետաքննության ընթացքում նաև բանկային գաղտնիության ռեժիմի վերացման կարգավորումներն ու դրանց կիրառման եղանակները, ինչպես նաև համոզվել, որ նշված գործընթացը պարզ /արդյունավետ է ու չի խոչընդոտում կոռուպցիոն դեպքերի բացահայտմանը // <https://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-ENG.pdf> (Վերջին մուտք՝ 09.08.2019):



լու/ապօրինի հարստանալու առերևույթ հատկանիշների առկայությամբ պայմանավորված, քրեադատավարական ընթացակարգերի շրջանակում ներկայումս էլ դատական ակտի հիման վրա կարող է տրամադրվել հասանելիություն՝ համապատասխան հայտարարատուների բանկային հաշիվների վերաբերյալ տվյալներին, այդուհանդերձ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հայտարարագրերի վերլուծության արդյունավետության մակարդակը շոշափելիորեն կբարձրանա այդ հանձնաժողովի՝ բանկային հաշիվների վերաբերյալ տվյալներին հասանելիության պայմաններում, ինչը չափազանց կարևոր է՝ մասնավորապես, ապօրինի հարստանալու ռիսկերի վերհանման առումով հայտարարագրերը վերլուծելիս: Հիշյալ հանգամանքը կարևորվում է նաև՝ պայմանավորված Օրենքով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց՝ կանխիկով գործարքների սահմանափակումների վերաբերյալ օրինադրույթների անկատար լինելու հանգամանքով¹:

Վերոնշյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի գործողության արդյունավետության բարձրացման հարցի համատեքստում անհրաժեշտ է վերանայել ու ընդլայնել ոչ միայն հայտարարագրերի բովանդակությունը, այլև ամբողջականացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հայտարարագրերի վերլուծության գործիքակազմը՝ նկատի ունենալով Հայաստանում ապօրինի հարստանալը քրեականացնելու հանգամանքը, այդ համատեքստում հայտարարագրերի բովանդակությունը նշված արարքի դիսպոզիցիայի բովանդակությանը ներդաշնակեցնելու, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից նաև ապօրինի հարստանալու ռիսկերի վերհանման առումով հայտարարագրերի վերլուծության արդյունավետությունը բարձրացնելու հրամայականը:

Annotation. In the article the imperative of enlarging/reviewing the scope/list of data subject to declaration, harmonizing the declaration content to the disposition content of illicit enrichment, as prescribed by the RA Criminal Code were highlighted. The necessity to provide the Corruption Prevention Commission with the access to the databases/registries of the declarant public officials bank accounts was also mentioned. The necessity to complete the toolkit of the asset declaration analysis in order to make the declaration analysis procedures more effective was also discussed.

Аннотация. В статье подчеркнута необходимость пересмотра/расширения круга/перечня данных, подлежащих декларированию, гармонизации содержания деклараций и диспозиции незаконного обогащения, предусмотренного Уголовным Кодексом РА. Также подчеркнута важность предоставления Комиссии по предотвращению коррупции доступа к базам данных/реестрам банковских счетов декларантов, а также путем установления соответствующих механизмов, создания целостного инструментария анализа деклараций с целью повышения эффективности данного процесса.

Հիմնարարներ¹՝ հայտարարագիր, հայտարարագրման ենթակա տվյալ, ապօրինի հարստանալ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

Key words: declaration, data to be declared, illicit enrichment, Corruption Prevention Commission.

Ключевые слова: декларация; данные, подлежащие декларированию; незаконное обогащение; Комиссия по предотвращению коррупции.

¹ Մանրամասն տե՛ս, Օրենքի հոդ. 41, մաս 9-ը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի հոդ. 25, մաս 8: